Պարույր Սևակ

Անպայման պայման

Մտքեր խա՞կ, թե՞ հասուն,-
Ո՞ւմ է պետք երգի մեջ:
(Մի կտոր հանածո ոգի է հարկավոր,
Մի պատառ կախարդանք,
Մոգության մի պճեղ,
Մի բացվող փակագիծ,
Անհայտի մի լուծում)...
Շրջում են «ինչու»-ներ՝ էակներ սապատված,
Որ չունեն օթևան ու չունեն դեռ անուն:
Հոգու մեջ տալ անկյուն ու լեզվով մկըրտել
Սապատված մի «ինչու» -
Ու երգը կինչի՛...
Հույզեր մե՞ծ, թե՞ ճղճիմ,-
Իսկ ո՞վ է վճռելու:
(Մի կտոր արնածոր տաք միս է հարկավոր՝
Սեփական ձեռքերով իրենից պոկոտած,
Մի սարսուռ օդեղեն,
Մի սարսում ընդերքի)...
Մթության երանգներն առատ են ավելի,
Քան բոլոր մնացած գույները գումարված:
Խուսափուկ խլիրտի քղանցքից գեթ կառչել,

Ստվերի վետվետուն քայլվածքը ճանաչել,-
Ու երգը չի՛ կարող չհնչել ինքնակամ...
Ի՞նչ անել և ինչպե՞ս.
Հա՞ստ մանել, թե՞ բարակ:
(Լի օրվա երակին պատվաստել կիրակի՛,
Վեճ մղել ծովի՛ հետ,
Ամաչել կրակի՛ց,
Չուշանա՛լ, չշտապե՛լ),-
Եվ այնժամ, օ, հարկավ
Իր պոչին կտնկվի ձվաձև առարկան,
Եվ արփին ափիդ մեջ կդառնա ձվածեղ...

07.X.1961թ.
Երևան